ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԵՐԱՆՈՒՀԻ ԲԱԽՇԻԻ

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2007

---

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

МАРКАРЯАН ЕРАНУИ БАХШИЕВНА

# МУЗЕЙНАЯ ЭКСПОЗИЦИЯ ПОСВЯЩЕННАЯ ГЕНОЦИДУ АРМЯН КАК СРЕДСТВО СОХРАНЕНИЯ ИСТОРИЧЕСКОЙ ПАМЯТИ

АВТОРЕФЕРАТ
диссертации на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.04 “Этнография”

ЕРЕВАН - 2007

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝
պատմական գիտությունների դոկտոր Լ. Ա. Բարսեղյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Գ. Սվազլյան
պատմական գիտությունների թեկնածու Ս. Հ. Պողոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պատմության թանգարան

Պաշտպանությունը կայանալու է 2007թ. , նոյեմբերի 27-ին, ժ. 14:00-ին
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 007
մասնագիտության խորհրդում (հասցեն՝ Երևան-375025, Չարենցի 15):
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ հնագիտության և
ազգագրության ինստիտուտի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2007թ. հոկտեմբերի 27-ին:
Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու Ա Մելքոնյան

---

Тема диссертации утверждена на ученом совете музея-института
Геноцида армян НАН РА
Научный руководитель:
доктор исторических наук Л. А. Барсегян

Официальные оппоненты:
доктор филологических наук В. Г. Свазлян
кандидат исторических наук С. Г. Погосян

Ведущая организация: Музей истории Армении

Защита состоится 27-ого ноября 2007г. в 14:00 часов, на заседании
специализированного совета 007 ВАК, при Институте археологии и
этнографии НАН РА по адресу: Ереван 375025, ул. Чаренца 15.
С диссертацией можно ознакомиться в библиотеке Института археологии
и этнографии НАН РА.
Автореферат разослан 27-ого октября 2007г.
Ученый секретарь специализированного совета,
кандидат исторических наук У. А. Мелконян

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ** համահունչ է ազգային ողբերգության նկատմամբ հայ ժողովրդի ներկա պատկերացումների պահանջների դրսևորման հետ:

20-րդ դարն աշխարհի բոլոր ժողովուրդների մտապատկերում կմնա որպես ցեղասպանությունների դարաշրջան:

Առաջին հազարամյակը հայերի համար ավարտվեց պետականության կորստով, երկրորդ հազարամյակը՝ պետականության վերականգնումով: Երրորդ հազարամյակը սկսվեց առանց ավանդական աշխարհաքաղաքական և պատմաէթնիկական գործոնների փոփոխության: Երկրորդ հազարամյակից երրորդ հազարամյակ որպես դժվարին ժառանգություն, հայ ժողովուրդն իր հետ տանում է իր «պատմական բեռը»՝ որպես ռազմավարական ծրագիր հանդիսացող Հայկական հարցը և Հայոց ցեղասպանության դատապարտման խնդիրը:

Այժմ, մեզ համար պարզ ու հասկանալի պետք է լինի այն կարևոր իրողությունը, որ ցեղասպանությունները բնութագրող երևույթները միտվում են նաև այսօր և եթե չձեռնարկվեն անհրաժեշտ միջոցառումներ դրանց կանխման հմար, ապա կշարունակվեն նաև մեր օրերում: Մենք պարտավոր ենք հիշել արդեն կատարված ցեղասպանություններն առնվազն հետևյալ պատճառներով:

Առաջին. հիշողությամբ մենք հարգում ենք զոհերի հիշատակը և ընդգծում մեր մարդկային լինելը:

Երկրորդ. կատարված ցեղասպանությունները մոռանալ՝ նշանակում է խրախուսել այն իրականացնողներին:

Երրորդ. մոռանալ ցեղասպանությունները՝ նշանակում է չհոգալ ապագայում այն կանխելու մասին և դիտել ցեղասպանությունը որպես պատահական երևույթ:

Չորրորդ. ցեղասպանությունների մասին ճիշտ պատկերացումներ և գիտելիքներ ունենալը հնարավորություն կտա այն ճանաչել առաջին իսկ դրսևորումներից և կանխել դրանք, քանի դեռ չի կատարվել անուղղելին: Վերջին տարիներին շատերը հայերին բարեկամաբար խորհուրդ են տալիս մոռանալ և թոթափել անցյալի ծանր բեռը: Նրանց մի մասը մեր անմիջական հարևաններն են, մյուս մասը՝ արևմտյան տարբեր մակարդակի գործիչները:

Միանգամայն իրավացի է ուսումնասիրողներից Հարություն Մարությանը, որը հատուկ քննարկելով իր իսկ կողմից առաջադրած հարցին, այն է՝ «հիշե՞լ, թ՞ե մոռանալ «դժվար» անցյալը», գտնում է. «արդ, կա՞ն, արդյոք, ժողովուրդներ, որոնք հրաժարվում են իրենց ինքնության կարևորագույն մաս կազմող պատմական հիշողության տարրերից... Հոլոքոստի սարսափները չեն մոռանում հրեաները, դրա մասին հիշողությունը նրանց ինքնության կարևորագույն տարրն է... Պատմական հիշողության ցավոտ էջերի (մանավանդ ցեղասպանության մակարդակի) մեղմման համար մեկ քաղաքակիրթ ճանապարհ կա անարդարություններ գործած կողմի համար (լինի հարևան պետություն, թե հարյուրավոր կիլոմետրեր հեռավորության վրա գտնվող) դա մեղքի գիտակցումն է, ընդունումը և զանազան դրսևորումներ ունեցող նյութական (քանի որ մարդկային անհնար է) փոխհատուցումը» (59, էջ 83-84):

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ թանգարանային ցուցադրությունների կազմակերպման միջոցով բացահայտել ցեղասպանության իրողությունը և մերկացնել նրանց, ովքեր հակված են թաքցնել ու քողարկել իրենց դիրքորոշումը: Ինչո՞ւ: Այս հարցին կարող է լինել միայն մեկ պատասխան: Անցյալի մասին հիշողությունն անհրաժեշտ է ապագայի համար և առաջին հերթին՝ այն հետագայում չկրկնելու համար:

Անշուշտ, Հայոց ցեղասպանության պատմության համակողմանի ուսումնասիրությունը կարևորագույն և արդիական նշանակություն ունի. մեզ համար՝ անցյալի ոգեկոչման, սեփական ժողովրդի պատմության նկատմամբ հարգանքի դաստիարակության ու վերաարժեքավորման, իսկ օտարների համար՝ քարոզչական առումներով:

Հայերի ցեղասպանության կազմակերպիչների անպատժելիությունն էր, որ մարդկության դեմ ուղղված նոր հանցագործություններ ծնեց: Համաշխարհային հանրության հիշողության կորուստը պատճառ հանդիսացավ 20-րդ դարի ընթացքում տեղի ունեցած հետագա ցեղասպանությունների իրագործմանը: Անպատժելիության և հիշողության կորուստը ծնեցին ֆաշիզմի երևույթը:

Անցյալի մասին ճշմարտությունն իմանալն անհրաժեշտ է մարդկությանը: Առավել ևս 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը պետք է հանրության կողմից ճանաչվի որպես մի մեծ ողբերգություն ոչ միայն հայ ժողովրդի, այլ համայն մարդկության համար: Կասկած չի հարուցում այն համընդհանուր տեսակետը, ըստ որի ցեղասպանության ոճրի մեղադրանքը մնում է մի առկա իրողություն, որը պետք է բազմակողմանի քննարկվի և, եթե այն հաստատվի, ապա պետք է նաև համապատասխան ձևով և հրապարակայնորեն ճանաչվի պատասխանատու պետությունների կողմից:

Ժողովուրդների պատմական հիշողությունն ունի հավերժական ծալքեր, որոնց խորքերում ամուր պահպանվում են իրենց մշտապես զգացնել տվող չսպիացած վերքերը: Ենթադրել, թե 1915 թվականի ցեղասպանությունը սոսկ մի սարսափահար հիշողություն է, որը մխրճվել է ու մնացել հայ ժողովրդի պատմական հիշողության մեջ և այսօրվա հայ մարդու աշխարհընկալման վրա ոչ մի ազդեցություն չի թողել, սխալված կլինենք: Ցեղասպանության հետևանքով հայ ժողովուրդը կրեց քանակական և որակական լուրջ փոփոխություններ, Արևմտյան Հայաստանի հայ բնակչությունը զրկվեց հայրենիքից ու կորցրեց իր բնօրրանը համարվող տարածքները, ինչպես նաև ունեցվածքը:

Լուրջ փոփոխություններ տեղի ունեցան ժողովրդի կենդանի մնացած մի հատվածի հոգեբանության, նրա հասարակական և քաղաքական մտածելակերպի, հոգևոր կերտվածքի բուն էության մեջ, ինչպես Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում:

Հայ ժողովուրդը մասնատվեց երկու մասի: Ողջ մնացած արևմտահայերի մի մասը դատապարտված էր աշխարհով մեկ սփռվելու և թափառական կյանքի, անխուսափելի ուծացման երկրորդ հայրենիքում՝ դեմ առ դեմ կանգնելով աշխարհի քար անտարբերության հանդեպ: Եթե ժողովրդի պատմական հիշողության կտրվածքում ցեղասպանությունը միգուցե միայն ծանր հուշ է, ապա նրա սոցիալ-հոգեբանական կտրվածքում ձևավորվեցին ազգային նկարագրի կարևորագույն գծեր:



ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ հիմքում ընկած է Հայոց ցեղասպանության ականատեսների, վերապրողների վկայությունների, օտարերկրյա դիվանագետների հաղորդումների, ինչպես նաև ցեղասպանագիտության տվյալների, ցեղասպանություններին նվիրված գործող թանգարանային ցուցադրությունների վերլուծությունը: Մեր կողմից ուսումնասիրվել են Հայոց ցեղասպանության, Հայաստանի պատմության պետական թանգարաններում, Հայաստանի Ազգային արխիվում և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող նյութերը, որոնք համեմատական վերլուծության միջոցով օգտագործվել են թեմայի ուսումնասիրությունը ամբողջացնելու համար:

Պարզելու համար, թե հայ ժողովրդի ներկայիս սերունդը ի՞նչ վերաբերմունք ունի ցեղասպանության պատմության նկատմամբ, դեռևս 1999թ. գարնանը Հայոց ցեղասպանության թանգարանը և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը հատուկ հարցաթերթիկների միջոցով հարցումներ անցկացրեցին թանգարանի այցելուների շրջանում, որին մասնակցեց 3000 մարդ: Հարցաթերթիկը կազմված էր 16 հիմնական և 92 ենթահարցերից: Կարևորելով ցեղասպանության թանգարանի այցելուների կարծիքն եղեռնի պատմության արժեվորման և հասարակության մեջ Հայոց ցեղասպանության թանգարանի ունեցած դերի վերաբերյալ՝ ատենախոսության մեջ օգտագործել և վերլուծության ենք ենթարկել տվյալ սոցիոլոգիական հարցման արդյունքները: Հարցաթերթիկն ամբողջությամբ տեղադրված է ատենախոսության հավելվածում (տե՛ս հավելված, աղյուսակ 1): Հարցումների պատասխանների վերլուծությունը վկայում է այն մասին, որ նույնիսկ հարցմանը մասնակցած տարբեր սերուդների ներկայացուցիչները միասնական են իրենց գնահատականների մեջ և հավասարաչափ առաջնորդվել են պատմական հիշողությանը անդավաճան մնալու իրենց սկզբունքներով:

Ցեղասպանությունը վերապրած յուրաքանչյուր հայ, ցեղասպանությանը զոհ դարձած յուրաքանչյուր ընտանիքի ժառանգորդ, արդարացիորեն պահանջում և ձգտում է իր նկատմամբ կատարված հանցագործության ոճրագործների կամ նրանց իրավահաջորդների կողմից ցեղասպանության ճանաչումը: Եվ որքան այս անարդարությունը խորն է և երկար է թաքցվում, այնքան ավելի խորն է նրա ճանաչման ձգտումը և ցանկությունը:

Որպես ասվածի հավելում, ատենախոսության մեջ վերլուծության ենք ենթարկել Հայոց ցեղասպանության թանգարանի այցելուների տպավորությունների մատյաններում հայ և օտար այցելուների թողած գրառումները (տե՛ս Հայոց ցեղասպանության թանգարանի գիտական ֆոնդեր, բաժին 58): Դրանց վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք արժեվորում են Հայոց ցեղասպանության թանգարանի գոյությունը և այն ընկալում որպես ազգի հիշողության առարկայացած դրսևորում: Հատկապես հետաքրքիր ու արժեքավոր են հայ երիտասարդների կարծիքները: Դատապարտելով կատարված հանցագործությունը՝ նրանք փորձում են վերահիմաստավորել անցյալը և տալ ներկայիս հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հանգուցալուծումը:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը գլխավորապես հիմնված է ժամանակակից պատմագիտության և թանգարանագիտության բնագավառում ուսումնասիրողների հետազոտությունների արդյունքների վրա:

Հայոց ցեղասպանության թանգարանի ցուցադրության ստեղծումը պահանջել է գիտական մեծ նախապատրաստական ու ստեղծագործական աշխատանք, որին նախորդել է սկզբնաղբյուրների ամենալուրջ ուսումնասիրությունը, ցուցադրության արտաքին գեղարվեստական տեսքի և ներքին կառուցվածքի լուծումն ու նախագծումը, ցուցանմուշների ճիշտ ընտրությունն ու դրանց տեղադրումը համապատասխան ճարտարապետական իրավիճակի մեջ: Ցուցադրության կառուցվածքի մեջ փաստորեն բացառվել է պատահականությունը: Յուրաքանչյուր ցուցանմուշ ցուցադրական համալիրում դիտվել է մյուսների հետ կապի մեջ: Այդպիսի փոխադարձ կախվածությունը և կոնկրետ դեպքում նպատակայինի և էականի առանձնացումը համարվել է ընդհանուր թեմատիկ ցուցադրության կազմակերպման հիմնական ու սկզբունքային պայմանը:

Ցուցադրության պլանը մշակվել է մի քանի հնարքներով ու տարբերակներով, հիմնականում՝ ելնելով ցուցադրվող նյութերի առկայությունից և դրանց ուսումնասիրության վիճակից: Ցուցադրության ստեղծման աշխատանքի նախնական փուլը ցուցադրության թեմատիկ կառուցվածքի կամ թեմատիկ պլանի ցանկի կազմումն էր, որը կանխորոշել է ցուցադրության հիմնական նպատակը, բովանդակությունը և խնդիրները, ցուցադրության հաջորդականությունը և ցուցադրական բաժինների ու համալիրների փոխհարաբերությունը: Թեմատիկ պլանի կազմումը պահանջել է ճշտել յուրաքանչյուր թեմատիկ համալիրի կամ ժողովածուի անվանումը, ընտրությունը, կազմը ու միասնության մեջ դրանց կառուցվածքը:

Ցուցադրության ստեղծման ողջ գործընթացը դիտվել է, առաջին հերթին, որպես նախագծային գործընթաց: Գիտական ցուցադրության ստեղծման աշխատանքում նախագծային մոտեցման կիրառումն ենթադրել է ցուցադրության ստեղծման աշխատանքի այնպիսի կազմակերպում, երբ, առաջին հերթին, հաշվի է առնվել նախագծի իրականացման հիմնական առանձնահատկությունը՝ ներգործությունը այցելուների վրա:

Ցուցադրության հեղինակները կարևորել են ցուցադրության նկատմամբ այցելուի վերաբերմունքի, ցուցադրության բովանդակության, նրա ընկալման պարագաները: Այցելուի դերում իրեն զգալը հնարավորություն է տվել ցուցադրության հեղինակներին հաշվի առնել նրանց ընկալման նրբերանգները, հուզական ռեակցիան և դրան համապատասխան՝ ճշտել ցուցադրության գեղարվեստական արտահայտչականությանը և առաջադրվող բովանդակության ամբողջականությանը նպաստող ճարտարապետական-կոնստրուկտորական ցուցադրածները:

Հայոց ցեղասպանության թանգարանի ցուցադրությունը սկսվում է թանգարանի նախասրահից, որը փաստորեն համարվում է ցուցադրության ներածական բաժինը: Ցուցադրության ներածական բաժինը խիստ անհրաժեշտ է այցելուներին կողմնորոշելու համար: Ըստ այդ բաժնի ցուցադրության՝ թանգարանի այցելուն իր համար պետք է պարզի, որ ցեղասպանությունը մեծագույն հանցագործություն է մարդկության հանդեպ, որ դարերի ընթացքում բազմաթիվ ցեղեր և ժողովուրդներ, ենթարկվելով ցեղասպանության՝ անհետացել են պատմության ասպարեզից: Սակայն դա չի խանգարել, որ ոճրագործությունները շարունակվեն նաև քաղաքակրթության արդի ժամանակաշրջանում:

Թանգարանի առաջին սրահի հանդիպակաց բազալտե պատին Հայկական լեռնաշխարհի և հարևան երկրների խորաքանդակ քարտեզն է, որը երիզված է հյուսիսում՝ Սև, արևելքում՝ Կասպից ծովերով, հարավում՝ Իրանական բարձրա-



վանդակով և հարավ-արևելքում՝ Միջերկրական ծովով (քարտեզի լայնությունը հնը մետր է, բարձրությունը՝ հինգ):

Քարտեզի վրա տեղադրված են Արևմտյան Հայաստանի և Օսմանյան Թուրքիայի տարածքում մինչև 1915թ. գոյություն ունեցած հայաբնակ այն բնակավայրերը, որոնք ենթարկվեցին զանգվածային տեղահանության և որտեղ կազմակերպվեց հայ բնակչության եղեռնը:

Ներածական սրահում ցուցադրվող լուսանկարները և ժողովրդագրական աղյուսակները պատմում են օսմանյան տիրապետության տակ գտնվող հայկական նահանգներում և այլ տարածքներում 1914թ. դրությամբ ապրող հայ ազգաբնակչության թվակազմի, հայկական բնակավայրերի, գործող հայկական եկեղեցիների և գործող հայկական դպրոցների թվի մասին:

Ցուցադրության երկրորդ, հիմնական սրահը, որը զբաղեցնում է 700քմ տարածք, այցելուներին է ներկայացնում պատմական հավաստի վկայություններ հայերի ցեղասպանության և թուրքերի ոճրագործության վերաբերյալ:

Հայտնի է, որ Հայոց ցեղասպանության փաստագրական աղբյուրներից հավաստին, սակայն, ամենասակավը ժամանակի ընթացքում պարբերաբար ոչնչացված թուրքական աղբյուրներն են: Հայտնի է նաև, որ թուրքական քարոզչությունն Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի արխիվային նյութերը համարում է վերոհիշյալ բաղադրատարրերի որոշ պահանջներին անհամապատասխան, որակում դրանք որպես քարոզչական, ինչպես նաև եղեռնը վերապրածների հաղորդագրությունները բնութագրում զոհ լինելու տեսանկյունից կասկածելի: Այդ իսկ պատճառով թանգարանային ցուցադրության համապատասխան բաժինները հավաստի ու վստահելի դարձնելու համար տեսականորեն լուծվել են հետևյալ մեթոդաբանական խնդիրները:

Ի հակակշիռ թուրքական քարոզչության՝ որպես ցուցադրության արժանահավատության ամենաբարձր չափանիշ, լայնորեն ցուցադրվել է թուրքական և նրա դաշնակիցների անհերքելի փաստագրական նյութը: Այդ նյութերի առաջին խումբը պատահականորեն և սակավորեն պահպանված թուրքական պաշտոնական փաստաթղթերն են, որոնց մեծ մասն օգտագործվել է թուրքական ռազմական դատարանի կողմից՝ կապված հայերի դեմ «բռնագաղթի և կոտորածների» հետ և համարվում է իրավաբանորեն անհերքելի և անառարկելի:

Երկրորդ խմբի փաստագրական նյութերը հանդիսանում են Թուրքիայի խորհրդարանի ստորին և վերին պալատներում հայերի «բռնագաղթի և կոտորածների» հարցի վերաբերյալ կայացած քննարկումների (որոնց համար խթանող հանգամանք դարձավ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը) արձանագրությունները: Փաստաթղթերի անառարկելիության տեսանկյունից խիստ կարևոր են խորհրդարանի ստորին պալատի Հինգերորդ կոմիտեի հետաքննչական հանձնաժողովի բացահայտումները:

Եվ, վերջապես, անհերքելի վկայությունների երրորդ խումբն են կազմել Թուրքիայի դաշնակիցների՝ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի արխիվներում պահվող նյութերի ցուցադրությունը:

Վերոհիշյալ խմբերին պատկանող փաստաթղթերի արժանահավատությունը, ճշգրտությունը, անհերքելիությունը թանգարանային ցուցադրության միջոցով ներկայացնելը դարձել է կարևոր միջոց, որը հակազդում է ոչ միայն Հայոց ցեղա-

սպանության թուրքական ժխտման ամբողջ համակարգին, այլև՝ զրկում թուրքական այդ քարոզչությանն իրավական ուժից:

Թանգարանային ցուցադրության մեջ տեղ են գտել նաև Հայոց ցեղասպանությանը ժամանակակից օտարերկրյա հասարակական, քաղաքական այն գործիչների լուսանկարներն ու վկայությունները, որոնք աշխատանքի բերումով գտնվում էին Օսմանյան կայսրությունում և Հայոց ցեղասպանության ականատեսն էին դարձել: Այս մարդկանց բողոքի ձայնը թեև գործնականում ոտքի չհանեց մեծ տերություններին ընդդեմ Թուրքիայի վարած հայասպան քաղաքականության, այնուամենայնիվ մեծ էր նրանց խոսքի ազդեցությունը հանրային կարծիքի ձևավորման հարցում: Հայոց ցեղասպանության ժամանակակից-ականատեսների խոսքն այսօր էլ իր կարևորությամբ առաջնային է: Օսմանյան կայսրությունում իրականացվող քաղաքականության օբյեկտիվ նկարագրությունները ամբողջական պատկերացում են տալիս Հայոց ցեղասպանության իրագործողների գաղափարախոսության և կատարման մեթոդների վերաբերյալ:

Հայոց ցեղասպանության թանգարանի ցուցադրության կարևոր մաս են կազմում նաև Մեծ եղեռնի վերապրողների ձեռագիր և տպագիր հուշագրությունները. որոնց հեղինակների աչքի առջև գազանաբար ոչնչացվել են իրենց ծնողները, քույրերը, եղբայրներն ու ազգակիցները, մարդիկ, որոնք ապրել են ցեղասպանության արհավիրքը: Ցեղասպանության թանգարանի այցելուների համար վերապրողների գրավոր և բանավոր վկայությունները մեծ հետաքրքրություն են առաջացնում, իսկ մասնագետների համար աղբյուրագիտական արժեք ունեն: Բանավոր վկայությունները այցելուներին են ներկայացվում նկարահանված տեսագրությունների ձևով:

Թանգարանի երրորդ սրահում այցելուներին են ներկայացվում հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական, հոգևոր և բարոյական կյանքում ցեղասպանության ունեցած հետևանքների վերաբերյալ տեղեկություններ: Այս սրահում փակցված աղյուսակներն ամփոփում են Արևմտյան Հայաստանի և Օսմանյան Թուրքիայի տարածքում 1914թ. դրությամբ հայ բնակչության ընդհանուր, ինչպես նաև 1915-1922թթ. ընթացքում տեղահանված կամ ոչնչացված ազգաբնակչության և 1922թ. դրությամբ պահպանված հայերի թվաքանակի վերաբերյալ հիմնական տվյալները:

Թանգարանի երրորդ ցուցասրահում գրանիտե հատուկ պատվանդանների վրա տեղադրված բյուրեղապակյա մասունքապահոցների մեջ այցելուներին են ներկայացվում Արևմտյան Հայաստանի վեց նահանգներից՝ Վանից, Բիթլիսից (Բաղեշ), Սվազից (Սեբաստիա), Դիարբեքիրից (Տիգրանակերտ), Էրզրումից (Կարին) և Խարբերդից բերված հողերը: Հայրենիքից բռնի տարագրված հայերն իրենց հետ թաշկինակների ու քսակների մեջ մի բուռ հող տարան: Նրանք, ովքեր փրկվեցին, դարձան աշխարհասփյուռ: Երբ 1995թ. բացվեց Հայոց ցեղասպանության թանգարանը, աշխարհի տարբեր երկրներում սփռված վերապրողները, որպես կորուսյալ հայրենիքի սրբազան մասունքներ, թանգարան ուղարկեցին իրենց պահպանած այդ մեկ բուռ հողը:

Նույն սրահում, առանձին խորանի մեջ տեղադրված է հայ ժողովրդի տառապանքն ու վերածնունդը խորհրդանշող «Կենաց ծառ» կոչվող հուշարձանը: Կիսված քարաբեկորների արանքից, որոնք խորհրդանշում են Հայաստանի և հայ ժողովրդի բաժանված լինելու հանգամանքը, վեր է խոյանում ճյուղատարած բազալտակուռ ծառի քանդակը, որն էլ իր հերթին խորհրդանշում է Հայաստանի և հայ ժողովրդի վերածննդի գաղափարը. թեև իր պատմական տարածքից զգալիորեն ավելի քիչ չափեր է զբաղեցնում, բայց կա համայն հայության բնօրրան անկախ Հայաստանը, և թեև աշխարհասփյուռ, բայց կա հայ ժողովուրդը, որը հպարտությամբ պահպանել է իր էթնիկ կերպարը:

Այս ցուցասրահում այցելուներին են ներկայացվում նաև Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման արդի գործընթացին վերաբերող փաստաթղթեր: Առանձին ցուցասեղանների մեջ ներկայացված են մի շարք պետությունների, միջազգային կազմակերպությունների և ԱՄՆ-ի առանձին նահանգների Հայոց ցեղասպանությունը դատապարտող հայտարարությունների բնագրերի պատճենները:

Գիտական ցուցադրության համար որպես վերջին սրահ է ծառայում թանգարանի ներքին բակը: Այն ունի հայկական ավանդական ճարտարապետությանը բնորոշ կառուցվածք:

Կիսաբոլոր բազալտե պատը հավասարաչափ բաժանված է տասներկու հատվածների, որոնցից յուրաքանչյուրի վրա միջնադարյան հայ վիմագրությանը բնորոշ տառատեսակներով փորագրված են Հայոց ցեղասպանության ժամանակակից և ականատես նշանավոր օտարերկրացի դիվանագետների, իրավաբանների, գիտնականների, հրապարակախոսների և գրողների քսաներորդ դարի առաջին ցեղասպանությունը դատապարտող ասույթները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատն առանց վկաների հնարավոր չէ իրականացնել, հետևաբար այս մարդկանց խոսքը հնչում է որպես վկայություն կատարված ոճրագործության:

Աշխարհի գրեթե վաթսուն երկրներում Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող տասնյակ հուշարձաններ են կանգնեցվել, որոնք բոլորն էլ վեր են խոյանում՝ խորհրդանշելով հայ ժողովրդի վերածննդի գաղափարը: Ելնելով այն մտայնությունից, որ ցեղասպանության ավելի քան մեկ և կես միլիոն զոհերը չունեցան գերեզման ու անթաղ, անշիրիմ նահատակներ են՝ թանգարանում 1996թ. տեղադրվեց խորհրդանշական տապանաքար նրանց բոլորի հիշատակին:

Թանգարանի ցուցադրության վերջին այս սրահը կարծես դատական նիստերի դահլիճ լինի: Այստեղ, Հայոց մեկ ու կես միլիոն զոհերի խորհրդանշական տապանաքարի առջև հնչեցնելով բոլորաձև պատի վրա փորագրված ականատեսների վկայությունները՝ յուրաքանչյուր այցելու անկախ տարիքից, սեռից, կրոնական, ազգային կամ ռասայական պատկանելությունից՝ հանդես է գալիս դատավորի դերում և նրան է պատկանում վերջնական վճիռ արձակելու իրավունքը:

2005թ Հայոց ցեղասպանության 90-ամյակի կապակցությամբ, հաշվի առնելով թանգարանի 10-ամյա աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրները և հատկապես մասնագետների ու այցելուների առաջարկությունները՝ նախատեսվեց վերանայել թանգարանի ցուցադրությունը: Ծրագիրն իրականացնելու նպատակով ստեղծվեց գործնական աշխատանքները կատարող երեք հոգուց բաղկացած խումբ՝ թանգարանի տնօրեն Լ. Բարսեղյանի գլխավորությամբ: Խմբի կազմում ընդգրկվեցի նաև ես՝ տողերիս հեղինակը, որպես Հայոց ցեղասպանության թանգարանի թանգարանագիտական աշխատանքների գծով փոխտնօրեն: Իմ կողմից կազմվեցին ցուցադրվող բոլոր թանգարանային առարկաների ցուցակները և ցուցադրության մեջ նրանց գրված տեղի աղյուսակները: Պահ-

պանելով գոյություն ունեցող ցուցադրության հիմնական դրույթները, նոր ցուցադրության մեջ լայնորեն ներգրավվեցին և առանձին համալիրներով ներկայացվեցին թուրքական, գերմանական, ավստրո-հունգարական, ռուսական, բրիտանական, ամերիկյան և այլ երկրների արխիվային փատաթղթերը, որոնք բացահայտում էին Հայոց ցեղասպանության կազմակերպված լինելու և ամենայն դաժանությամբ իրագործվելու փաստը: Ցուցադրությունը համալրվեց ցեղասպանության ականատես-վերապրողների ձեռագիր հուշագրություններով և նրանց կողմից որպես կորուսյալ տան ու հայրենիքի հուշ պահպանված կենցաղային ու անձնական իրերով: Եղեռնահուշ մասունքների ցուցադրումը ավելի զգացական դարձրեց թանգարանի գիտական ցուցադրությունը:

Նոր ցուցադրության կազմակերպման ընթացքում ինձ, որպես Հայոց ցեղասպանության թանգարանի տնօրենի թանգարանագիտական աշխատանքների գծով տեղակալի, հանձնարարվեց կազմել շարժական, ժամանակավոր ցուցահանդեսի նյութերի ժողովածու, որը պետք է Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի միջոցառումների կազմակերպման ժամանակ ցուցադրվեր դպրոցներում, բարձրագույն ուսումնական, մշակութային հաստատություններում, սփյուռքահայ համայնքներում, տարբեր երկրների խորհրդարաններում և հասարակական վայրերում: Մեր կողմից կազմված «XX դարի առաջին ցեղասպանությունը» ժողովածուն հրատարակվեց չորս լեզուներով և լայն ընդունելություն գտավ հանրության կողմից: Ժողովածուն իր մեջ պարունակում է հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով շուրջ 15 ցուցադրական թեմաներին վերաբերող 12 բացատրագրեր, 1 քարտեզ, 72 լուսանկարներ, 14 աղյուսակներ և ցեղասպանության թեմային նվիրված հուշարձանների ու հայ նկարիչների ստեղծագործությունների պատկերներ (86):

Ժամանակավոր ցուցահանդեսի կազմակերպումը տարբեր երկրներում և հատկապես սփյուռքահայ համայնքներում, նոր խթան հանդիսացավ պատմական հիշողությունը վերապրելու համար:

Մեր կողմից կազմված, Հյաոց ցեղասպանությանը նվիրված ցուցադրության կազմակերպման նոր սխեման մենք առաջադրում ենք այդ թեմայով ցուցահանդեսների կազմակերպիչներին որպես մեթոդական և կազմակերպական ուղեցույց, որը կիրառական նշանակություն է ձեռք բերում:

Ցուցադրական, թեմատիկ այդ պլանը որպես հավելված ներկայացնում ենք մեր ատենախոսության մեջ (տե՛ս հավելված, աղյուսակ 2), համոզված լինելով, որ նրա օգնությանը կարող են դիմել ուսանողները, ուսուցիչները և մշակույթի բնագավառի աշխատողները:

Ատենախոսության մեջ հանգամանալից վերլուծության ենք ենթարկել պատմական հիշողության պահպանության նպատակով Հայոց ցեղասպանության թանգարանի կողմից իրականացված մի շարք միջոցառումները: Անհրաժեշտ է նշել, որ թանգարանն իր գործունեության ընթացքում աչքի ընկավ նաև պատմական հիշողության պահպանմանը միտվող զանգվածային աշխատանքի կազմակերպման հետաքրքիր նոր ձևերով: 29 տարվա ընդմիջումից հետո կյանքի կոչվեց Հիշողության պատը, որը Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրի հեղինակները նախատեսել էին որպես առանձին կառույց ընդհանուր համալիրում: Հարյուր մետր երկարությամբ ձգվող բազալտե մեծադիր սալերով կառուցված պատը սկսեց իր գործառույթը, երբ 1996թ. ապրիլի 23-ին նրա ետնամասում ամփոփվեց հայ



ժողովրդի մեծ բարեկամ Հայոց ցեղասպանության ականատես ու վկա հանդիսացող գերմանացի գրող և հրապարակախոս Արմին Թ. Վեգների աճյունասափորը: Այն երևան տեղափոխվեց Իտալիա-Հայաստան միության նախաձեռնությամբ՝ Միլանից: Դրանով իսկ կատարվեց Ա. Վեգների պատգամը, երբ վերջինս 1968թ. լինելով Երևանում, այցելեց Ծիծեռնակաբերդ, որտեղ ծնկի իջնելով Հավերժական ջահի մոտ՝ խնդրել էր մահից հետո իր աճյունը ամփոփել Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրում: Հոր պատգամն իրականացրեց նրա որդին՝ Միշա Վեգները, որը 1996թ. ապրիլի 23-ին մասնակցեց, փաստորեն, երկրորդ անգամ կատարվող հուղարկավորության արարողությանը: Հիշողության պահպանությանը նվիրված այս միջոցառումից հետո մինչև 2007թ. յուրաքանչյուր տարվա ապրիլի 23-ին Հիշողության պատի մեջ ամփոփվեցին Յոհաննես Լեպսիուսի, Ջեյմս Բրայսի, Հենրի Մորգենթաուի, Անատոլ Ֆրանսի, Ֆրիտյոֆ Նանսենի, Բենեդիկտոս XV-ի, Ֆրանց Վերֆելի, Ջակոմո Գորինիի, Հեդվիգ Բյուլի, Ֆայեզ Ալ Ղոսեյնի, Կարեն Եփփեի թվով տասներկու օտարերկրացի քաղաքական, մշակութային եվ հասարակական գործիչների գերեզմաններից բերված հողով մարմարե սափորները: Հիշողության պատի մեջ տեղադրված յուրաքանչյուր սափոր ծածկված է գրանիտե հուշաքարով, որի վրա հայերեն և անգլերեն լեզուներով փորագրված են տվյալ գործչի անուն-ազգանունը, ծննդյան և մահվան տարեթվերը: Ցուցադրության գեղարվեստական և կոնստրուկտորական ձևավորման աշխատանքի կատարման հիմնական չափանիշը համարվել է այցելուների ընկալման լիարժեքությունը:

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի ոգեկոչմանը նվիրված միջոցառումների կազմակերպման լավագույն օրինակ կարող է ծառայել թանգարանի կողմից հանդես բերած մեկ այլ նախաձեռնություն, որը լայն միջազգային ճանչում է ձեռք բերել: Դեպի հուշահամալիր տանող ծառուղու և թանգարանի մուտքի հարևանությամբ ստեղծվեց Հիշողության պուրակը՝ բարեկարգ անցուղիներով մի տարածք, որտեղ Ծիծեռնակաբերդ այցելած յուրաքանչյուր պետական-պաշտոնական պատվիրակություն տնկում է արծաթափայլ եղևնի: Այսօր արդեն Հիշողության պուրակում խնամվում են ավելի քան հարյուր եղևնիներ: Յուրաքանչյուր ծառի կողքին դրված է հուշատախտակ՝ ցուցող, որ ծառը տնկվել է ի հիշատակ 1915թ. Հայոց ցեղասպանության 1,5 միլիոն նահատակների: Այցելուների վրա մեծ ազդեցություն են թողնում հատկապես այն ծառերը, որոնք տնկվել են հայտնի քաղաքական, պետական, հասարակական գործիչների կողմից:

Նման միջոցառումները նպատակ են հետապնդում հայ և օտար հասարակություններում կենդանի պահել Հայոց ցեղասպանության մասին հիշողությունը:

Գիտական ցուցադրության նախագծային խնդիրների լուծման գործում կարևոր նշանակություն է ձեռք բերել թանգարանի այցելուների հետ փոխհամագործակցությունը: Այն իր մեջ ընդգրկել է քարոզչություն, ուսուցում և մշակութային պահանջների բավարարում, որոնք, իրենց հերթին, սերտորեն առնչվում են թանգարան այցելող յուրաքանչյուր մարդու սոցիալական, անհատական-հոգեբանական առանձնահատկություններին: Ուսուցման և դաստիարակչական խնդիրների առանձնացումը, որպես թանգարանային ցուցադրության կարևոր մի բնագավառ, ենթադրում է առանձին հետազոտությունների կազմակերպում, որի ընթացքում ցուցադրությունը հանդես կարող է գալ որպես գիտելիքների տարածման և անհատի աշխարհայացքի ձևավորման միջոց:

Անկասկած թանգարանային յուրաքանչյուր ցուցադրություն կատարելագործման կարիք ունի: Բացառություն չի կարող կազմել նաև Հայոց ցեղասպանության թանգարանը:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԳԻՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Թանգարանագիտությունը արդեն 20-րդ դարի 80-ական թվականների վերջում եկավ այն հստակ եզրահանգմանը, որ ընդհանուր պատմական-աղբյուրագիտական հետազոտությունների մեջ որպես ինքնուրույն բնագավառ առանձնանում է թանգարանային աղբյուրագիտությունը: Ի տարբերություն պատմական սկզբնաղբյուրների, թանգարանային աղբյուրագիտության ուսումնասիրության օբյեկտը հանդիսանում է թանգարանային առարկան: Վերջինս, որը գիտահետազոտական աշխատանքի և ցուցադրության կազմակերպման ընթացքում հիմնականում պահպանության, պատմական հիշողության վերականգնման, պատմական փորձի ուսումնասիրման և մեկնաբանման միջոց է, նաև առանձնակի կարևորություն ունեցող աղբյուրագիտական միավոր է:

Թանգարանային աղբյուրներ ասելով պետք է պատկերացնել թանգարանային առարկաների և գիտաօժանդակ նյութերի ամբողջությունը, որոնք կազմելով թանգարանային ֆոնդը՝ հավասարաչափ հանդիսանում են տեղեկատվության կրողներ: Թանգարանային և պատմական աղբյուրագիտության հիմնախնդիրների մեջ սկզբունքային տարբերություն գոյություն չունի: Աղբյուրների դասակարգման հիմնախնդիրը կապված է թանգարանային ֆոնդերի դասակարգման հիմնավորման ընտրության հետ: Օավալուն տեղեկատվություն պարունակող սկզբնաղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել ու դասակարգել դրանք ըստ տեսակների ու բնույթի: Հարկ է զանազանել զանգվածային սկզբնաղբյուրները՝ հիմնականում իր ժամանակաշրջանը բնորոշող տեղեկատվական նյութերը, որոնց ընտրությունը համեմատական եղանակով հնարավորություն է ընձեռում ստույգ աղբյուրի հատկանիշներ հաղորդել թանգարանային առարկային: Սկզբնաղբյուր համարվող թանգարանային առարկան վերածվում է իրական վկայության և ըստ ամենայնի նպաստում է ցուցադրության հավաստիությանը:

Հայոց ցեղասպանությանը նվիրված թանգարանային ցուցադրության մեջ օգտագործվող լուսանկարչական նյութերն անգնահատելի սկզբնաղբյուրներ են, երբ հատկապես ժամանակագրական առումով դրանք համընկնում են պատմական այն ժամանակահատվածին, որը ներկայացնում է ցուցադրությունը: Դեռևս 110 տարի առաջ և հետագայում՝ 1915-1923թթ.կատարված լուսանկարները համարվում են Հայոց ցեղասպանության պատմության կարևոր սկզբնաղբյուրներ, որոնք հավասարապես արժեվորվում են իր ժամանակի արխիվային փաստաթղթերի ու վավերագրերի կողքին և կազմում են աղբյուրների առանձին բնագավառ:

Հայոց ցեղասպանությունը ներկայացնող լուսանկարներն արդեն ցեղասպանության առաջին տարիներին լայնորեն շրջանառության մեջ մտան և միջազգային հանրությունը տեղեկատվություն ստացավ սարսափելի եղերնագործության



մասին: Ցավով պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ լուսանկարները չդարձան նրա բաղկացուցիչ մասը, հատուկ ուսումնասիրության ու դասակարգման չենթարկվեցին: Արդեն 1915թ. սեպտեմբերի 10-ին Թուրքիայի ռազմա-ծովային նախարար Սիմեդ Զեմալը հատուկ հրամանով խստորեն արգելեց դեպի Սիրիա տարագրված հայկական քարավանների զբաղեցրած տարածքում լուսանկարներ կատարելը: Սրանով պետք է բացատրել 1915թ. և հաջորդ տարիներին վերաբերող լուսանկարների թվի նվազ լինելը: Ատենախոսության մեջ անդրադարձ է կատարվում պահպանված թվով հինգ ոչ շատ մեծ, սակայն արժեքավոր լուսանկարների հավաքածուների վկայություններին: Լուսանկարների, որպես սկզբնաղբյուրի և թանգարանային առարկայի, ուսումնասիրությունը պահանջում է հետևողականորեն բացահայտել նրա ծագումը, ճշտել լուսանկարման վայրը, լուսանկարի վրա պահպանված տեսարանների իսկությունը: Հայոց ցեղասպանությանը նվիրված բազմաթիվ լուսանկարներ հրատարակվել են ամերիկյան և եվրոպական մամուլում: Բազմաթիվ լուսանկարներ չեն գտել իրենց նկարագրությունը, վերծանման չեն ենթարկվել ու անհայտ են մնացել:

Թանգարանային ցուցադրության մեջ կինո-տեսագրային, ինչպես գեղարվեստական, այնպես էլ վավերագրական ֆիլմերի լայնորեն օգտագործումը մեծապես տպավորիչ է դարձնում ցուցադրությունը:

Ժամանակակից տեխնիկական միջոցների շնորհիվ ավելի ցայտուն և համոզիչ ֆիլմերի ամբողջական կամ հատվածային ցուցադրությունը լրացնում է պատմագիտական շատ բացակայող նյութերի պակասը և համոզիչ ու հավաստի է դարձնում ներկայացվող թեմայի բովանդակությունը: Ներկայումս գոյություն ունեն Հայոց ցեղասպանությանը նվիրված բազմաթիվ գեղարվեստական և վավերագրական ֆիլմեր:

Գեղարվեստական առաջին ֆիլմը նկարահանվեց ԱՄՆ-ում 1919 թվականին «Հոգիների աճուրդ» խորագրով, որի հիմքում ընկած էր ամերիկյան հայտնի գրող Հ. Գեյտսի «Հոշոտված Հայաստան» գեղարվեստական վերապատումով գրված գիրքը: Գեղարվեստական և վավերագրական ֆիլմեր են նկարահանվել Խորհրդային Հայաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Լիբանանում, Սիրիայում և այլ երկրներում: Հայոց ցեղասպանությանը նվիրված փաստավավերագրական մեծաքանակ տեսաֆիլմերի ստեղծման գործում առաջատարի դեր է կատարում Լոս Անջելեսում դեռևս 1979 թվականից գործող Հայկական ֆիլմերի հիմնադրամը:

Իր կարճատև գործունեության ընթացքում տեսաֆիլմերի մեծ հավաքածու է ստեղծել նաև Հայոց ցեղասպանության թանգարանը:

Թուրքական պատմագիտությունը, Թուրքիայի կառավարությունը, Թուրքիայի քաղաքական գործիչները և մտավորականության ներկայացուցիչները համառորեն ժխտում են արևմտահայության ցեղասպանությունը: Այնպիսի տպավորություն է ստեղծվել, կարծես թե Թուրքիայում ընդհանրապես չեն լսել հայ բնակչության տեղահանության և ոչնչացման մեջ մեղադրվող թուրք հանցագործների դատավարության մասին, այն դեպքում, երբ Ստամբուլում հրատարակվող ինչպես թուրքալեզու, այնպես էլ հայալեզու, ֆրանսալեզու և հունալեզու մամուլը 1919-1920թթ. լայնորեն լուսաբանում էին յուրաքանչյուր օրվա դատական նիստերի ընթացքը: Թուրքական աղբյուրների վկայությունների օգտագործումը թանգարանային ցուցադրության մեջ, կապված թուրք հանցագործների դատավարության հետ, միմիայն կարող է հաստատել այն իրողությունը, որ Թուրքիան իսկ

հանդիսանում է առաջին պետությունը, որը պաշտոնապես ճանաչել է Հայոց ցեղասպանության փաստը:

Ատենախոսության մեջ որպես գործնական օգնություն, թանգարանային ցուցադրությունների ստեղծողներին առաջարկվում է լայնորեն օգտագործել 1915-2005թթ. ընթացքում հրատարակված արխիվային նյութերի, և ընդհանրապես գոյություն ունեցող մատենագիտական և փաստաթղթերի ժողովածուների տվյալները:

Հայոց ցեղասպանության մասին գրել են եղերնագործությունը սկսելու երկրորդ իսկ օրը: Գրել են իրադարձությունների ականատեսները, դեպքերին ժամանակակից պատմաբաններ, հասարակական գործիչները, ինչպես հայերը, այնպես էլ օտարերկրյա քաղաքական, ռազմական, դիվանագիտական, կրոնական և մշակութային գործիչները: Ստեղծվել է բազմաժավալ օտարալեզու գրականություն, որը հիմնականում հանրությանն է ներկայացրել ճշմարտությունը հայերի ցեղասպանության մասին: Պատմագիտական բնույթի ուսումնասիրությունների կողքին, որպես պատմական հավաստի վավերագրերի արժեք, հանդես են գալիս դեպքերին ականատես-ժամանակակիցների հուշագրությունները:

Տպագիր գիրքը և ձեռագիր հուշագրությունները, որոնք ծնունդ են առել ցեղասպանության տարիներին, թանգարանային ցուցադրության մեջ առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում:

Հայոց ցեղասպանությանը նվիրված թանգարանային ցուցադրության հայեցակետը մշակելիս չպետք է մոռացության տալ թանգարանագիտական մեծ արժեք ներկայացնող այնպիսի նյութերի օգտագործելը, ինչպիսիք են ցեղասպանությունն ականատես վերապրողների վկայությունները:

Հրապարակի վրա եղած հարուստ նյութերը, հատկապես բանագետ, բանասիրական գիտությունների դոկտոր Վերժինե Սվազլյանի կողմից շուրջ հիսուն տարիների ընթացքում հետևողական պրպտումների շնորհիվ ի մի բերված հուշապատումները, ձայնագրած ու տեսագրած ժողովրդական բանավոր վկայությունները իրենց մշտական տեղը կարող են գտնել ցուցադրության մեջ: Ականատես-վկաների պատմած հուշերում արտացոլված են հայրենի բնաշխարհի հիասքանչ լինելը, բնակիչների նահապետական առօրյա կենցաղն ու սովորույթները, սոցիալական վիճակը, թուրքերի կողմից գործադրած դաժանությունները (հարկահավաք, զորահավաք, զինահավաք, ջարդ, կոտորած, բռնագաղթ, ողջակեզ): Հայերի կրած անասելի տառապանքները (ուժասպառ լինելու սատիճանի հասնող հետիոտն քայլք, ծարավ, քաղց, համաճարակ, մահվան սարսափ) վերհուշի տպավորությունների ներկայացման ձևով հասել են մինչև մեր օրերը:

Հայոց ցեղասպանությունն անջնջելի կերպով տպավորվել է ականատեսների հիշողություններում, որոնք հագեցած են խոր պատմականությամբ, ունեն հավաստի վկայությունների արժեք և միանշանակ են իրենց եզակիությամբ:

Ականատես-վկաները իրենց հուշերը պատմել են որպես սրբազան խոստովանանք և ավանդել են այդ բոլորը հետագա սերունդներին ճշմարտացի փոխանցելու համար:

Հայոց ցեղասպանությանը նվիրված ցուցադրության մեջ բանավոր հուշապատումների ներկայացման մի քանի հնարքների օգտագործմամբ այցելուներին կարելի է ցուցադրել ցեղասպանությունը վերապրողների տեսագրությունները, ձայնագրությունները, կենդանի խոսքը:



19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի առաջին քառորդի ժամանակահատվածում հայ իրականության մեջ պատմական աղբյուրների նոր տեսակներ են հայտնվում: Դրանք առաջին հերթին դիվանագիտական բնույթի փաստաթղթերն են, տեղի ունեցող իրադարձությունների մասին ականատեսների ու առանձին գործիչների հրապարակախոսական վկայություններն ու ելույթները, հիմնականում կապված Օսմանյան Թուրքիայի վարած մարդատյաց քաղաքականության՝ կայսրության տարածքում բնակվող ոչմահմեդական ժողովուրդների իսպառ բնաջնջման կամ բռնի դավանափոխության ենթարկելու ծրագրի իրականացման հետ:

Հայոց ցեղասպանությանն առնչվող թանգարանային արժեքների աղբյուրագիտական վերլուծությունը հիմնականում նպատակ է հետապնդում աղբյուրի բովանդակության ուսումնասիրության միջոցով բացահայտել նրա բուն էությունը:

Ցուցանմուշի տեղեկատվական ներուժի բացահայտման համար օգտագործվում են գիտաօժանդակ նյութերը՝ քարտեզները, սխեմաները, դիագրամաները, աղյուսակները և այլն: Ժամանակակից ցուցադրություններում գիտաօժանդակ նյութերի օգտագործումն ավելի սահմանափակ ծավալներ են ընդունում և կիրառվում:

Թանգարանային աղբյուրագիտության 19-20-րդ դարերին պատկանող նյութերի ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացությանը, որ պատմական աղբյուրների գրավոր հիմնական տեսակների, օգտագործմամբ Հայոց ցեղասպանության թեման առավել ընդգրկուն և համոզիչ ներկայացնելու համար կարևորվում են միջազգային իրավական, օրենսդրական աղբյուրները:

Պետք է խոստովանել, որ պատմական բնույթի թանգարանային ցուցադրություններում սովորաբար անտեսվում է պատմական երևույթների և պրոցեսների կառուցվածքային վերլուծությունը: Թանգարանային ցուցադրությունները ստեղծող գիտնականներն ու մասնագետները հաճախ խուսափում են ցուցադրության մեջ ընդարձակ բովանդակություն պարունակող բացատրագրեր օգտագործելուց: Այնինչ Հայոց ցեղասպանությանը նվիրված ցուցադրության մեջ, երբ խոսքը վերաբերում է թուրքական կառավարող շրջանների կողմից վարվող հայատյաց և հայաջինջ քաղաքականությանը, անհնար է ցուցադրությունը ներկայացնել՝ շրջանցելով այդ ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանում բնակվող հայ ազգաբնակչության սոցիալ-տնտեսական վիճակի իրողությունը:

Այսօր, երբ թանգարանային այցելուներն իրենք են պահանջում ճշմարտացի տեղեկություններ ստանալ և ծանոթանալ Արևմտյան Հայաստանի մասին պահպանված վկայություններին, անհրաժեշտություն է դառնում այդ նպատակով լայնորեն օգտագործել վիճակագրական տվյալներ ներկայացնող աղյուսակներ ու սխեմաներ: Ցուցադրության մեջ վիճակագրական տվյալները ներկայացնող տախտակները և վահանակները, ցուցադրական սեղաններում տեղադրված նյութերը, բնօրինակ թանգարանային առարկաների կողքին ու նրանց հետ, ձեռք են բերում թանգարանային արժեքի նշանակություն:

Վիճակագրական փաստաթղթերը կամ նրանց հիման վրա ստեղծված տեղեկատվական նյութերն առավել բարդ տիպի պատմական աղբյուրներ են: Արժե հիշել անգլիացի նշանավոր քաղաքական գործիչ Դիզրայելի խոսքերը. «Գոյություն ունի մարդկանց խաբելու երեք ձև. խուսափող պատասխան, ուղղակի սուտ և վիճակագրություն»: Թանգարանային ցուցադրության ոչ մասնագետ այցելուի համար երեք տարբեր տեղեկատվությունն էլ կարող է ընկալվել որպես ճշմարտա-

ցի հաղորդագրություն: Այսօր էլ աճպարարությամբ զբաղվող մի խումբ թուրք և արևմտյան պատմաբաններ առաջնորդվում են հենց այս սկզբունքով: Հայոց ցեղասպանության իրողությունը ժխտելու նպատակով նրանք, փոփոխելով ցանկացած վիճակագրական հաշվարկ, շրջանառության մեջ են դնում այդ կեղծ «տվյալները» և դրանք անվերջ կրկնելով, մատուցում որպես իրողություն:

Հարկ է նշել, որ թանգարանային ցուցադրության մեջ վիճակագրական տվյալների օգտագործումը պահանջում է մեթոդաբանական հստակ սահմանումներ: Մասնավորապես՝ հարկ է նկատի ունենալ ներքոհիշյալ երկու կարևոր հանգամանք:

Առաջին. վիճակագրությունը հասարակական գործունեության ձև է, որն ուղղված է տեղեկատվություն ստանալուն, դրա մշակմանն ու վերլուծությանը:

Երկրորդ. վիճակագրությունը նաև սոցիալական գիտությունների ոլորտի մի բնագավառ է, որն ուսումնասիրում է զանգվածային որակական ու փոխկապակցված հարաբերությունների վերլուծության ընդհանուր հարցերը: Այս առումով վիճակագրական նյութն անհրաժեշտ է դիտել որպես պատմական աղբյուր, իսկ դրա վերլուծության և ուսումնասիրման մեթոդիկան՝ որպես աղբյուրագիտության առանձնահատուկ բաժին:

Ներկայումս, երբ հրապարակի վրա են թուրք ուսումնասիրողների միտումնավոր խեղաթյուրումներով արված «պատմագիտական» հետազոտությունները, որոնց հիմքում ընկած են հայ բնակչության թվաքանակի մասին կեղծ ժողովրդագրական տվյալները, անհրաժեշտություն է դառնում թանգարանային ցուցադրության մեջ ներկայացնել, բացահայտել ու վերլուծել նաև վիճակագրական այլ տվյալներ, որոնք ուղղակիորեն վերաբերում են Արևմտյան Հայաստանում բնակվող հայերի սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակին:

Ցուցադրության մեջ աղյուսակների ցուցադրումը վկայում է, որ այդ նյութերի կիրառման դիապազոնը բավականին ընդարձակ է և արդյունավետ: Ավանդական ցուցադրական աշխատանքներում նման նորամուծությունը նոր հնարավորություններ է ստեղծում, հատկապես, երբ այցելուների զգալի մասն ինքնուրույն է դիտում ցուցադրությունը և առնչվում աղյուսակների, սխեմաների ու տեղեկատվական բնագրերի, վկայությունների հետ: Փաստորեն տեղեկատվական նյութերի նման ցուցադրումը թանգարանային ցուցադրության միջոցով գիտելիքների տարածման համար անսահմանափակ հնարավորություն է ընձեռում:

Ցեղասպանության հենանքով մարդկային զգալի կորուստների կողքին մեծ են նաև հայ ժողովրդի կրած նյութական վնասներն Արևմտյան Հայաստանում և Հայաստանի Առաջին հանրապետության տարածքում: Թանգարանային ցուցադրության կարևոր թեմաներից կարող է դառնալ ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստների մասին ճշգրիտ տեղեկատվության հաղորդումն այցելուներին, որոնք մարդկային զգալի կորուստների վերաբերյալ քիչ թե շատ տեղեկություններ ստացած լինելուց բացի ընդհանրապես չեն պատկերացնում ժողովրդի կրած նյութական վնասների չափի մասին:



## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Այս գլխում քննարկվում են Հայոց ցեղասպանության սոցիալական, քաղաքական, բարոյական շարժառիթները, որոնք ծնում են զանգվածային կոտորածներ:

Օսմանյան Թուրքիայում բռանապետության կառավարման և ռազմական ապարատների միածույլ և միասնական գաղափարախոսության, ներքին խստացված կարգապահության պայմաններում անհանգիստ և իր վիճակից դժգոհ հայ փոքրամասնությունը մեծամասնություն կազմող թուրք կառավարողների կողմից որակվեց ու համարվեց «ներքին թշնամի», որն իբր ավելի վտանգավոր էր, քան արտաքինը: Մեծ քաղաքական նպատակներ հետապնդող թուրքական գաղափարախոսության իրագործմանը ծառայող փիլիսոփայությունն արդարացնում էր բռնությունն ու դաժանությունը:

1914թ. սանձազերծված պատերազմը «ներքին թշնամի» համարվող հայերի դեմ կառավարողներին գործելու անսահմանափակ հնարավորություններ տվեց և նպաստեց նրան ծայրահեղ բռնությունների դիմելուն, որոնք սկզբնական շրջանում ընդհանուր համայնապատկերում աննկատ մնացին:

Միանգամայն ճիշտ է այն կարծիքը, որ ապագա ցեղասպանությունները կանխագուշակելու համար անհրաժեշտ է ողջ խորությամբ ուսումնասիրել և ըմբռնել անցյալը, նաև կանխագուշակել ապագա ցեղասպանությունները՝ դրանք կանխելու համար:

Ցեղասպանության երևույթն ամբողջովին բացահայտելու համար հարկավոր է պատասխանել մի շարք հարցերի: Ասենք, որո՞նք էին այն ներքին և արտաքին նախապայմանները, որոնք հնարավորություն ստեղծեցին պետական իշխանության հասնել այն ուժերին, որոնք գործելու հակումներ ունեին: Եվ վերջապես այդ ուժերը ցեղասպանության որոշումը կայացնելիս ինչպիսի՞ աշխարհայացքով, զգացմունքներով և դրդապատճառներով էին առաջնորդվում:

Ի տարբերություն պատմական վաղ դարաշրջաններում կատարված կոտորածների, 20-րդ դարի առաջին ցեղասպանության երևույթը պայմանավորված էր մի շարք առանձնահատկություններով, երբ իշխող գերազգայնական վերնախավերը օժտված էին չտեսնված մեծ կարողություններով, վերնախավեր, որոնց տնօրինության տակ էին գտնվում զանգվածային ոչնչացման հզոր միջոցներ: Այդ առանձնահատկությունները հատկապես դրսևորվում են՝ 1) կազմակերպչական յուրահատկությամբ, 2) ծրագրավորմամբ, պլանավորմամբ և ժամանակի ընտրությամբ, 3) բյուրոկրատական արդյունավետությամբ և համապարփակվածությամբ, 4) տեխնոլոգիական կարողությամբ, 5) գաղափարախոսության անհրաժեշտությամբ: Այս հինգ բնութագրումներն էլ առկա էին թե՛ հայերի, թե՛ հրեաների ցեղասպանության մեջ: Վերոհիշյալ առանձնահատկությունները հիմնականում պետական մեքենայի արդիականացման արդյունք ու հետևանք էին:

Հայոց ցեղասպանության ականատեսների ու ժամանակակիցների հուշապատումներն ու վկայությունները լի են ցեղասպանության զոհերի ոչնչացման թուրքական եղանակների կիրառման մասին տեղեկություններով:

Ճանաչողական-դաստիարակչական մեծ նշանակություն է ձեռք բերում Հայոց ցեղասպանությանը նվիրված թանգարանային ցուցադրությունների կազմակերպումը, գործնական և հիմնական պահանջներից է ցուցադրության ստեղծման հայեցակարգի ձևավորումը: Այն բնորոշում և ճշտում է ապագա ցուցադրության կազմակերպման հիմնական խնդիրները՝ դրանց լուծման մեթոդների ձևերն ու եղանակները: Թանգարանային ցուցադրությունների կազմակերպումը հիմնականում պահպանում է իր առանձնահատկությունները՝ ճշմարտացի գիտական հիմնավորման ու տվյալների օգտագործման սկզբունքների կիրառումը:

Ցուցադրության հայեցակարգի մշակումը հանդիսանում է հեղինակների գիտական աշխատանքի արդյունքը, որն իր մեջ ներառում է թանգարանային նյութերի և պատմագիտական գրականության մանրակրկիտ վերլուծությունը:

Նախապես կազմվում է ցուցադրության նախնական թեմատիկ կառուցվածքը, որտեղ առանձնացվում է ցուցադրական թեմաների հաջորդականությունը, ընտրվում են առանձին կամ համալիր առաջնակարգ ցուցանմուշները և ներկայացվում են առաջադրանքներ ցուցադրության ճարտարապետական-գեղարվեստական հայեցակարգի մշակման գաղափարները, որոնց հիմքում դրվում են գիտական ցուցադրության կազմակերպման հիմնական հայեցակարգի պահանջները: Ցուցադրության տարածական, ճարտարապետական-գեղարվեստական լուծման մեկնակետի սահմանումից հետո, աշխատանքների երկրորդ փուլում ձեռնարկվում են ընդարձակ թեմատիկ կառուցվածքի մշակման աշխատանքները: Ստեղծվում է մի փաստաթուղթ, որը բովանդակում է ցուցադրության բաժինների և թեմաների անվանումը, ցուցադրության մեջ դրանց զբաղեցրած տեղի հերթականությունը: Ցուցադրության ստեղծման վերջին փուլում առաջնահերթ խնդիր է դառնում ցուցադրության հիմքի, ցուցադրական նյութերի՝ բնօրինակ թանգարանային առարկաների ընտրությունը: Թանգարանային ֆոնդերում պահվող առարկան ցուցադրության մեջ նոր հատկանիշներ է ձեռք բերում և հանդես է գալիս նոր կարգավիճակով: Ցուցադրության մեջ իրենց տեղը գտած կրկնօրինակված թանգարանային առարկաները և գիտաօժանդակ նյութերը նույնպես համարվում են ցուցանմուշներ:

Գիտական ցուցադրության ստեղծման ընթացքում առաջին պլան է մղվում պատմա-ժամանակագրական սկզբունքը, որը ենթադրում է ցուցադրական նյութերի խմբավորումը՝ գիտության մեջ ընդունված ժամանակագրությանը համապատասխան և ցուցադրության գիտական բովանդակությունը կարող է մշակվել միայն ժամանակակից գիտության նվաճումների արդյունքների հիման վրա:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Հայոց ցեղասպանությանը նվիրված թանգարանային ցուցադրությունների կազմակերպման տեսական և գործնական սկզբունքների մշակման ու կիրառման գործընթացին վերաբերող մեր ուսումնասիրությունը՝ գտնում ենք.



1. Անհրաժեշտ և կարևոր հիմնախնդիր համարել ցուցադրության թեմատիկ կառուցվածքի ուղղվածությունը, որից հիմնականում կախված է ողջ ցուցադրության բովանդակությունը, նրա յուրահատկությունը և անկրկնելիությունը:

Այսօր ազատություն ձեռք բերած անկախ Հայաստանի Հանրապետությունը լայն հնարավորություններ ընձեռում պատմական հիշողության վերականգնման համար:Նոր թափ է հաղորդվել թանգարանային արժեքների հավաքման գործին: Առանձնահատուկ պետք է նշել Հայոց ցեղասպանության թանգարանի ստեղծման փաստը: Թանգարանի պահոցներում այսօր իրենց տեղն են գտել հազարավոր լուսանկարներ, արխիվային փաստաթղթեր ու վավերագրեր, հնատիպ գրքեր, հարյուրավոր տեսագրություններ, ձայնագրություններ, հարցազրույցներ, կինոֆիլմեր և բազմաթիվ արժեքավոր նյութեր, որոնք լայնորեն օգտագործվում են թանգարանային ցուցադրություններում և հեռուստահաղորդումներում:

2. Հայոց ցեղասպանությանը նվիրված թանգարանային ցուցադրությունների ստեղծման, արդեն գոյություն ունեցող ցուցադրությունների կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները հնարավորություն են տալիս սահմանել այն հիմնական դրույթներն ու պահանջները, որոնք պետք է ներկայումս հաշվի առնվեն ընդհանրապես ցուցադրությունները կազմակերպելիս:

Ելնելով մեր ուսումնասիրությունների արդյունքներից՝ կարելի է ընդգծել մի շարք հիմնական պահանջներ: Որո՞ք են դրանք:

Առաջին. ցուցադրական թեմայի բացահայտման, նրա հիմնական բովանդակության գլխավոր տեսական և մեթոդաբանական սկզբունքների առանձնացումը:

Երկրորդ. թանգարանային ցուցադրության կարևորագույն սկզբունքի՝ պրոցեսների, երևույթների, իրադարձությունների, փաստերի առարկայական փաստագրավորման հստակ և հաջորդական ներկայացման պահպանումը:

Երրորդ. դեպքերի և իրադարձությունների հասունացման առանձնահատկությունների արտացոլումը:

Միաժամանակ ներքոհիշյալ երկու հիմնական գործոնների առկայության դեպքում նաև ցուցադրության ամենաբարձր արդյունավետության ապահովվումը: Այդ գործոններն են՝

ա) ցուցադրության գաղափարա-տեսական բարձր մակարդակը.

բ) թանգարանային ցուցադրության կազմակերպման պրոֆեսիոնալ բարձր մակարդակը, երբ ստեղծվում է գաղափարի և գեղագիտականի, գիտականի և ճարտարապետական-կոնստրուկտորական հայեցակարգի օրգանական միասնությունը:

Ցուցադրության կատարելագործման ընթացքը պահանջում է ցուցադրական թեմաների ճիշտ ընտրություն և ցուցադրության մեջ նրանց տեղի ճշգրտում, և ամենագլխավորը՝ թանգարանային ֆոնդային հավաքածուների սիստեմատիկ ուսումնասիրություն, նոր նյութերի բացահայտում և համալրում:

Հայոց ցեղասպանությանը նվիրված թանգարանային ցուցադրությունը հստակորեն պետք է տա մի շարք կարևոր հարցերի պատասխանը:

ա) Ովքե՞ր են հայերի ցեղասպանության կազմակերպիչներն ու իրականացնողները, որոնց, նախ և առաջ, պետք է դատապարտի ներկայիս Թուրքիայի կառավարությունը, որն այսօր իրեն մեղավոր չի համարում ցեղասպանության կազմակերպման գործում.

բ) Ինչպիսի՞ իրավաբանական հիմքերի և ներկայումս գործող միջազգային փաստաթղթերի հիման վրա մենք կարող ենք մեղադրանք ներկայացնել ոճրագործության կազմակերպիչներին, ինչպես նաև ժամանակակից Թուրքիային.

գ) Ո՞վքեր կարող են մեղադրանքներ առաջադրել Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին (Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Միավորված ազգերի կազմակերպությունը, որի անդամն է Թուրքիայի հանրապետությունը, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը, վերջապես, գործող որևէ միջազգային դատարան).

դ) Ցեղասպանության հետևանքով բարոյական և նյութական ինչպիսի՞ վնասներ են հասցվել հայ ժողովրդին, ինչպիսի՞ն պետք է լինի վնասի փոխհատուցումը և ո՞ւմ է իրավունք վերապահվում ստանալ փոխհատուցումը:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ հարուստ փաստագրական նյութերի հիման վրա կառուցված թանգարանային ցուցադրությունների տրամաբանական եզրահանգումը հետևյալն է.

Ցեղասպանությունն ազգերի իրավունքների կոպիտ ոտնահարում է, որի համար ոճրագործ պետությունը պետք է պատասխանատվություն կրի: Այս դրույթից ելնելով, նրա առջև դրված առաջին հիմնական պարտականությունն է ընդունել փաստերը՝ առանց ձգտելու կոծկել կամ նենգափոխել այդ իրողությունը: Սա ինքնին նվազագույն հատուցում կհանդիսանա հայ ժողովրդի կրած բարոյական անհաշիվ կորուստների դիմաց: Միջազգային փորձը, որ վերաբերում է թուրքական պետությանը՝ սկսած այս դեպքերից, տալիս է հիմնավոր իրավական հիմք՝ հաստատելու, որ այս պետության ինքնությունը և անընդհատությունը չի փոխվել երկրի պատմության մեջ եղած փոփոխություններից՝ Օսմանյան կայսրության վախճանից ի վեր: Ոչ նրա տարածքային կորուստները, ոչ էլ քաղաքական համակարգի վերակազմակերպումը չեն եղել այնպիսին, որ տուժեր նրա շարունակվող ինքնությունն ազգերի իրավունքի տեսակետից:

Հետևաբար չի կարելի համարել, թե թուրքական կառավարությունները, որ հրաժարվել են պատասխանատվությունից, արդարացվել են: Նրանց պատասխանատվությունը մնում է այն պետության վրա, որը նրանք ներկայացնում են միջազգային հանրության մեջ:

Այսպիսով, Հայոց ցեղասպանությանը նվիրված թանգարանային ցուցադրությունը պետք է կառուցված լինի պատմական հայտնի և ճշգրիտ փաստերի վրա: Որպես հակազդեցություն թուրքական պատմագրության իրականությունը ժխտելու փորձերին՝ անհրաժեշտ է ցուցադրության մեջ շեշտը դնել ցուցադրվող նյութերի և փաստաթղթերի բացարձակ անվիճարկելիության վրա: Այդ իսկ առումով ցուցադրությունում տեղ գտած բոլոր ցուցանմուշները պետք է արտահայտեն՝

ա. օգտագործվող և ցուցադրվող աղբյուրների ու վկայությունների արժանահավատությունը.

բ. փաստերի ճշգրտությունն ու անհերքելիությունը.

գ. փաստերը ստուգման ենթարկելու հնարավորությունը:

Ցեղասպանությանը նվիրված ցուցադրության մեջ որպես խիստ կարևոր բաժին, իր ողջ խորությամբ պետք է ներկայացնել ոչ միայն Հայոց, այլև, ընդհանրապես ցեղասպանությունների առաջացման և դրսևորումների որոշից դրդապատճառները, որոնք պայմաններ են ստեղծում ցեղասպանության առաջացման և իրագործման համար:



Այդ դրդապատճառները հետևյալներն են՝

ա. երկարատև կոնֆլիկտի գոյությունը.

բ. ուժային անհամաչափ հարաբերությունները.

գ. հնարավորության մեխանիզմը.

դ. կոնֆլիկտը կազմակերպված և համատարած բռնությամբ լուծելու արմատական փորձը:

Հայոց ցեղասպանությանը վերաբերող փաստաթղթերի մանրակրկիտ ուսումնասիրության եզրակացությունն այն է, որ փաստագրական աղբյուրներից ամենահավաստին, սակայն ամենասակավը, ժամանակի ընթացքում պարբերաբար ոչնչացված թուրքական աղբյուրներն են: Արդի թուրքական քարոզչությունը Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի արխիվային նյութերը համարում է ոչ արժանահավատ, թշնամու մտածելակերպով միակողմանի ներկայացված և որակում դրանք որպես քարոզչական, իսկ եղեռնը վերապրածների հաղորդագրությունները բնութագրում զոհի հոգեբանությանը բնորոշ զգացմունքային և այդ տեսանկյունից կասկածելի: Այդ իսկ պատճառով թանգարանային ցուցադրության համապատասխան բաժինը հավաստի ու վստահելի դարձնելու համար անհրաժեշտ է տեսականորեն լուծել մի շարք մեթոդաբանական խնդիրներ:

Առաջին. ի հակակշիռ թուրքական քարոզչության՝ որպես ցուցադրության արժանահավատության ամենաբարձր չափանիշ պետք է լայնորեն ցուցադրել թուրքական և նրա դաշնակիցների անհերքելի փաստագրական նյութը: Առաջին հերթին ոչնչացումից փրկված թուրքական պաշտոնական փաստաթղթերը, որոնք օգտագործվել են թուրքական ռազմական դատարանի կողմից՝ որպես հայերի «բռնագաղթին և կոտորածներին» վերաբերող վկայություններ, ուստի և համարվում են իրավաբանորեն անհերքելի և անառարկելի:

Երկրորդ. պետք է ներկայացվեն Թուրքիայի խորհրդարանի ստորին և վերին պալատներում հայերի «բռնագաղթի և կոտորածների» հարցի վերաբերյալ կայացած քննարկումների արձանագրությունները: Հատկապես անառարկելի և խիստ կարևոր են խորհրդարանի ստորին պալատի Հինգերորդ կոմիտեի հետաքննչական հանձնաժողովի բացահայտումները:

Երրորդ. առաջնային տեղ պետք է հատկացնել Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի արխիվներում պահվող նյութերի ցուցադրությանը:

Չպետք է մոռացության տալ նաև պատմական այն ժամանակաշրջանը, որը նախորդել է Մեծ եղեռնին և, փաստորեն, դառնալով ընդհանուր թեմայի ներածական բաժինը, այցելուներին ներկայացնել 19-րդ դարի վերջին Օսմանյան Թուրքիայում հայերի կոտորածները, որոնց ընթացքում միայն 1894-1896 թվականների ցեղասպանության զոհ դարձան շուրջ երեք հարյուր հազար մարդ:

Ամփոփելով 1894-1896 և 1915-1923թթ. իրադարձություններին վերաբերող նյութերի մեր ուսումնասիրությունը՝ ժամանակագրական առումով փաստաթղթերը դասակարգել ենք հետևյալ կերպ.

Առաջին խումբ. Օսմանյան կայսրության 1876-1908թթ. քաղաքական-ռազմական և սոցիալ-տնտեսական գործունեությանը վերաբերող արխիվային փաստաթղթեր, որոնք պատմում են Արևմտյան Հայաստանում ապրող հայերի վիճակի մասին:

Երկրորդ խումբ. երիտասարդ թուրքերի հեղափոխությունից հետո, մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբն ընկած ժամանակաշրջանին վերաբերող նյութեր:

Երրորդ խումբ. Օսմանյան կայսրության Առաջին համաշխարհային պատերազմի շրջանի և հետպատերազմական տարիների՝ Թուրքիայի դաշնակից պետությունների քաղաքական ու ռազմական գործունեությունը ներկայացնող արխիվային նյութեր:

Չորրորդ խումբ. նույն ժամանակահատվածում Թուրքիայի թշնամի պետությունների գործողությունները ներկայացնող փաստաթղթեր:

Հինգերորդ խումբ. չեզոք երկրների արխիվներում պահվող նույն ժամանակաշրջանին վերաբերող փաստաթղթեր:

Հայոց ցեղասպանության թանգարանի ցուցադրության մեջ ներկայացվող փաստաթղթերի արժանահավատությունը, ճշգրտությունը, անհերքելիությունը նպատակ ունի հակազդելու և իրավական հիմքից զրկելու Հայոց ցեղասպանության թուրքական ժխտողական քարոզչության ամբողջ համակարգը:

Վերոհիշյալից ելնելով առանձնակի կարևորություն է ներկայացնում Հայոց ցեղասպանության իրականացման կանխամտածվածության վերաբերյալ նյութերի ցուցադրումը, որը կներկացնի այն բոլոր պնդումները, ըստ որոնց իբր հայերի դեմ ձեռնարկված այսպես կոչված «միջոցառումները» պայմանավորված էին պատերազմական ժամանակաշրջանի պահանջով և դրանք պետք է քննարկել այդ հանգամանքների համատեքստում:

Այն, որ Հայոց ցեղասպանությունը կանխամտածված էր և ըստ նախորոք մշակված այդ ծրագրի փուլ առ փուլ իրականացված՝ ապացուցված է ոչ միայն հենց թուրքական, այլև դաշնակից պետությունների արխիվային փաստաթղթերի վկայություններով: Այդ փաստաթղթերի անժխտելիությունը հաստատված և արձանագրված է 1918 թվականին, թուրքական ռազմական դատարանի վարույթում:

Ցուցադրության դինամիկան պահանջում է ընդլայնել Հայոց ցեղասպանության իրականացման կարևոր գործոնների մասին պատմագիտական տվյալները:

Ելնելով ատենախոսվող թեմայի արդիականությունից, կատարված ուսումնասիրության նպատակից, նրա առջև դրված խնդիրներից, ինչպես նաև գիտական աշխատանքի կիրառական նշանակությունից, մենք թանգարանային աշխատողներին, ժամանակավոր ցուցադրությունների կազմակերպիչներին առաջարկում ենք օգտվել մեր կողմից կազմված Հայոց ցեղասպանությանը նվիրված գիտական ցուցադրության սխեմատիկ թեմատիկ պլանից, որը կարող է ուղեցույց հանդիսանալ ցուցադրությունների կազմակերպման ժամանակ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱՑՈԼՎԱԾ Է ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

**Գրքեր, հոդվածներ**


1. XX դարի առաջին ցեղասպանությունը. Հայոց ցեղասպանությանը նվիրված ցուցահանդեսներ կազմակերպելու նյութերի ժողովածու, կազմող՝ Երանուհի Մարգարյան, Երևան, 2005, 100 էջ, հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով:





2. Հայոց ցեղասպանության թանգարանի գիտական ցուցադրության կազմակերպման սկզբունքները (համահեղինակ՝ Լ. Ա. Բարսեղյան), Երևան, 2006, 72 էջ:
3. Թանգարանային աղբյուրագիտության տվյալների կիրառումը Հայոց ցեղասպանությանը նվիրված գիտական ցուցադրության մեջ, Երևան, 2007, 82 էջ:
4. Մի լուսանկարի պատմություն, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», Երևան, 2004, թիվ 9, էջ 168-171:
5. Թանգարանային գիտաժանդակ նյութը որպես աղբյուրագիտական արժեք, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», Երևան, 2006, էջ 18-28:


**МАРКАРЯН ЕРАНУИ БАХШИЕВНА**

## МУЗЕЙНАЯ ЭКСПОЗИЦИЯ ПОСВЯЩЕННАЯ ГНОЦИДУ АРМЯН КАК СРЕДСТВО СОХРАНЕНИЯ ИСТОРИЧЕСКОЙ ПАМЯТИ

### РЕЗЮМЕ


Организация научной экспозиции, посвященной Геноциду армян, преследует две основные цели.

Первая-восстановление народной памяти и представление геноцида как реальной исторической действиельности.

Вторая-образавательная и научно-просветительная работа с посетительями. Организация подобной научной экспозиции требует выявления сущности геноцида как преступления против человечества и цивилизации. Музейная экспозиция, посвященная геноциду, должна стать средством, вызывающим размышления, выражающим уважение к памяти жертв и выявления всей глубины причиненных страданий, а также средством высокой оценки человеческого достоинства.

Для нас должна быть очень важна та простая и очевидная истина, что явления, характеризующие геноциды, существуют и сегодня, и если не будут предприняты необходимые меры, то они будут иметь место, принимая всё более широкий размах. Мы обязаны помнить уже осуществлённые геноциды по меньшей мере по следующим причинам.

Первая. Помня, мы выражаем уважение к памяти жертв и подчеркиваем свою человечность.

Вторая. Предание забвению осуществленных геноцидов равнозначно поощрению их организаторов.

Третья. Не помнить о геноцидах означает не думать об их предупреждении в будущем и рассматривать геноцид как случайное явление.

Четвертая. Правильные представления и знания о геноцидах дают возможность распознавать их в ранних проявлениях и предупреждать, пока не произошло непо-

правимое. Память о прошлом необходима для будущего и в первую очередь для того, чтобы не повторять его в дальнейшем.

Предание забвению мировой общественностью стало причиной последующих геноцидов, осуществлённых в течение 20-го века. Безнаказанность и забытость породили такое явление, как фашизм. Не зная прошлого, не возможно построить достойного будущего. Человечеству необходимо знать правду о прошлом. Тем более первый геноцид 20-го века должен быть признан мировой общественностью как величайшая трагедия не только армянского народа, но и всего человечества.

В глубине исторической памяти человечества есть пласты, где хранятся постоянно дающие раны. Если в плане исторической памяти геноцид - это тяжёлое воспоминание, то в социально-психологическом плане в результате геноцида оформились важнейшие черты национального облика. Память тех, кто пережил геноцид, преобразилось в историческую память народа, и чем дальше по времени мы отдаляемся от этих событий, тем больше обостряется у последующих поколений чувство необходимости осуждения геноцида и требования расплаты.

Основная идея при создании любой музейной экспозиции, относящейся к геноциду армян, в первую очередь должна быть направлена на разоблачение лживого отрицания геноцида. Отрицание геноцида армян получило такую весомость, что само по себе стало предметом особого изучения. Создание музейных экспозиций о геноциде армян преследует цель приобретения знаний и передачи поколениям правдивой истории уничтожения народа, проживающего на земле их предков.

В различных главах диссертации обсуждаются основные принципы организации музейных экспозиций, посвящённых геноциду армян, а также вопросы использования в научной экспозиции музейных источниковедческих данных о геноциде армян. При создании научной экспозиции о геноциде армян на первый план выдвигается историко-хронологический принцип, который предполагает группировку выставляемых материалов в соответствии с принятой в науке хронологией, так как научное содержание экспозиции может разрабатываться только на основании результатов современных научных достижений. Основная цель источниковедческого анализа музейных экспонатов, связанных с геноцидом армян - это выявление их подлинной сути посредством изучения содержания источника.

Отдельная глава диссертации посвящена анализу научной экспозиции Музея геноцида армян, открытого в Ереване в 1995 г. Посвящённый памяти жертв геноцида, музей стал могучим средством борьбы с забвением во имя сохранения исторической памяти. Организация экспозиции музея требовала правильного тематического выбора экспонатов и уточнения их места в экспозиции, а также, что очень важно, систематического изучения собрания музейного фонда, выявления и комплектации новых материалов.

Исходя из результатов наших исследований, при организации музейной экспозиции, посвященной геноциду армян, можно выделить ряд основных требований, в том числе:

Первое- выявление тематики выставки, разделение главных теоретических и методологических принципов её основного содержания.



Второе- соблюдение важнейшего принципа музейной экспозиции- четкого и последовательного представления процессов, явлений, событий, фактов, предметов, документов.

Третье- отражение особенностей назревания событий и явлений. Высокий идеологический уровень экспозиции создается при органическом слиянии идейного и эстетического, научного и архитектурно- конструкторского восприятия как основных факторов, обеспечивающих наибольшую эффективность экспозиции.

Все экспонаты, нашедшие свое место в экспозиции, посвященной геноциду армян, должны обеспечивать:

а. достоверность используемых и выставленных источников и свидетеьств;
б. точность фактов;
в. неопровержимость фактов;
г. возможность проверки фактов.

**YERANUHI MARGARYAN**

## THE MUSEUM EXHIBITION DEVOTED TO THE ARMENIAN GENOCIDE AS A MEANS OF KEEPING HISTORICAL MEMORY

### Summary

The 20th century will remain in the minds of all the peoples in the world as the age of Genocides, and the Armenian Genocide will remain as the first large-scale Genocide.

The memory of the survivors of the Armenian genocide has turned into the national historical memory, and the further we move off from those events, the greater the generations' demand to denounce and recognize the Genocide becomes.

The museum exhibitions dedicated to the Armenian Genocide aim at passing the true history of a nation with an ancient civilization which was annihilated on the land of its ancestors to the coming generations.

The dissertation aims at presenting these museum exhibitions devoted to the Armenian Genocide as a factor of struggle against oblivion and of keeping historical memory from the viewpoint of historical science and museology.

The organizing of the scientific exhibition dedicated to the Armenian Genocide pursues two main aims:

1. to renew people's memory and introduce the Genocide as a true historical reality
2. to carry out educational and scientific-enlightening work among visitors

Such a scientific exhibition demands to reveal the essence of the Genocide as a crime towards humanity and civilization. The museum exhibition dedicated to the Genocide must become a means of honouring the victims' memory, revealing the torments caused by the Genocide and highly assessing human dignity.

The dissertation consists of introduction, three chapters, conclusions, bibliography and a series of photos concerning the Armenian genocide.

Ե. Մարգարյան